

**« Հ Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ Ի Մ Ե Ծ Ս Ա Ր Ի Ա Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք ՈՒ Մ Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Վ Ա Ծ Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն
Հ Ս Կ Ո Ղ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Ր Դ Յ ՈՒ Ն Ք Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն**

«21» օգոստոսի 2013 թ.

գ. Մեծ Սարիար

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 87 կարգադրության, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատանքային խումբը, մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ Ռուբեն Հարությունյանի (խմբի ղեկավար), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արտավազ Գևորգյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետ Զորիկ Խաչատրյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Օֆելյա Մխիթարյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի առաջին կարգի մասնագետ Մարինե Վարդանյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Մեծ Սարիարի գյուղական համայնքի ղեկավար Բաբիկ Ավետիսյանի, Մեծ Սարիարի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի օգոստոսի 8-ին և ավարտվել է 2013 թվականի օգոստոսի 14-ին:

Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը՝

Մեծ Սարիարի համայնքի ղեկավարը համայնքում կատարված նախորդ վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2010 թվականի սեպտեմբերի 25-ի տեղեկանքը ներկայացրել է համայնքի ավագանու 2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 9 արտահերթ նիստի քննարկմանը և համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակվել ու գործողության մեջ են դրվել միջոցառումների ժամանակացույց՝ համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների իրականացման ուղղությամբ արձանագրված թերություններն ու բացթողումները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

Վարչական հսկողության արդյունքում արձանագրվել են այնպիսի թերություններ և բացթողումներ, որոնց մասին նշվել էին նաև նախորդ վարչական հսկողության ժամանակ:

- 1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի նորընտիր ավագանին 2012 թվականի դեկտեմբերի 4-ի իր առաջին նիստում ընդունել է ավագանու կարոնակարգը (որոշման հերթական համարը նշված չէ):
- 2) Չնայած նրան, որ գյուղապետարանում առկա է համայնքի 2011-2014 թթ. զարգացման ծրագիրը, սակայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարի կողմից այն սահմանված կարգով ավագանու քննարկմանը չի ներկայացվել և այն հաստատելու վերաբերյալ ավագանու որոշում չի կայացվել:

Համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառված թվով 7 ծրագրային աշխատանքներից կատարվել են ներհամայնքային, դաշտամիջյան և Մեծ Սարիար-Ջաջուռավան միջհամայնքային ճանապարհների վերանորոգման (համայնքի բյուջեից կատարված հատկացումներ՝ 2010թ.-150.0 հազ. դրամ, 2011թ.-116.0 հազ. դրամ, 2013թ.-150.0 հազ. դրամ), խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման (համայնքի բյուջեից կատարված հատկացում՝ 2011թ.-237.0 հազ. դրամ), ոռոգման ցանցի վերանորոգման (համայնքի բյուջեից կատարված հատկացում՝ 2012թ.-200.0 հազ. դրամ), գերեզմանատան ցանկապատի վերանորոգման (համայնքի բնակիչների ուժերով) աշխատանքները: Չեն կատարվել բնակավայրի գազաֆիկացման, մանկապարտեզի, ակումբի և գրադարանի շենքերի կառուցման ծրագրային աշխատանքները:

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը կազմված է թերություններով: Նրանում լիարժեք տեղեկություններ չեն ներկայացվել համայնքի սոցիալական և տնտեսական իրավիճակի մասին, չեն ներկայացվել համայնքը բնութագրող լիարժեք վիճակագրական տվյալներ: Չեն տրվել քառամյա ժամկետում համայնքի բյուջեի կատարման կանխատեսումներ, հողի հարկի, գույքահարկի և հողի վարձակալական վճարների ապառքների հավաքագրման կանխատեսումներ, ինչպես նաև ծրագրում ներառված աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեով նախատեսվող ներդրումների ապահովման հիմնավորումներ: Փաստաթղթում նախատեսված ծրագրային աշխատանքներն ունեն ընդհանուր բնույթ: Նրանցում չեն նշվել առաջադրված հիմնախնդիրների նկարագրությունները, ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, աշխատանքների ծավալները, ֆինանսավորման աղբյուրները, կատարման ժամկետները, ինչպես նաև իրականացվելիք ծրագրերի կենսունակության ապահովման հիմնավորումները:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ավագանին չի անդրադարձել համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառված ծրագրային աշխատանքների կատարման ընթացքին:

- 3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանին հաստատել է համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեները (ավագանու որոշումներ՝ 15.12.2010թ. թիվ 4, արձ. թիվ 10, 08.12.2011թ. թիվ 5, արձ. թիվ 9 և 04.12.2012թ. թիվ 5, արձ. թիվ 9):

Հատկանշական է այն փաստը, որ համայնքի 2011 թվականի բյուջեն հաստատելուց հետո է համայնքի ավագանին որոշումներ կայացրել համայնքի տարածքում տեղական տուրքերի և

վճարների դրույքաչափերը հաստատելու, համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու և գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ (ավագանու որոշում՝ 17.12.2010թ. թիվ 1, թիվ 2, արձ. թիվ 11/):

Համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու վերաբերյալ ավագանու 08.12.2011թ., թիվ 5 (արձ. թիվ 9) որոշման մեջ բացակայում են հղումները «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին, որոշման վերնագիր է ձևակերպվել հետևյալ խմբագրությամբ՝ «Համայնքի 2012 թ. բյուջեն՝ հավելվածով», որը չի համապատասխանում նշված հարցի վերաբերյալ ավագանու իրավասությունը սահմանող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և իրավական ակտերի վերնագրին ներկայացվող պահանջները սահմանող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի դրույթներին: Բացի այդ իրավական ակտը չունի նաև եզրափակիչ դրույթներ, այսինքն որոշմամբ պարզ չէ, թե վերջապես ավագանին հաստատել է համայնքի բյուջեն, թե ոչ:

Համայնքի ավագանին 26.01.2011թ. թիվ 1 (արձ. թիվ 1) և 18.01.2013թ. թիվ 2 (արձ. թիվ 1) որոշումներով հաստատել է համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունները՝ համայնքի 2010 և 2012 թվականների բյուջեների կատարման վերաբերյալ:

Համայնքի 2010 բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու վերաբերյալ ավագանու 26.01.2011թ. թիվ 1 (արձ. թիվ 1) որոշման վերնագրում և բովանդակության մեջ չեն նշվել հաշվետվությունը ներկայացնող մարմնի անվանումը և բյուջեի տարիթիվը, բացի այդ, որոշումը չունի եզրափակիչ դրույթներ, այսինքն որոշմամբ պարզ չէ, թե ավագանին հաստատել է համայնքի ղեկավարի հաշվետվությունը համայնքի 2010թ. բյուջեի կատարման վերաբերյալ, թե՛ ոչ:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները և համայնքի 2011 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չի ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը:

Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանին թվով 13 որոշումներ է կայացրել համայնքի 2010, 2011, 2012 և 2013 թվականների բյուջեներում փոփոխություններ կատարելու համայնքի ղեկավարի առաջարկությունների վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 04.10.2010թ., թիվ 1, արձ. թիվ 8, 15.12.2010թ., թիվ 1, արձ. թիվ 10, 26.01.2011թ. թիվ 2, արձ. թիվ 1, 26.10.2011 թ. թիվ 2, արձ. թիվ 7, 29.06.2012 թ. թիվ 1, արձ. թիվ 3, 18.01.2013 թ. թիվ 1, արձ. թիվ 1, 31.07.2013 թ. թիվ թիվ 1,2, արձ. թիվ 6 և այլն):

Համայնքի բյուջեում կատարված փոփոխություններին վերաբերվող համայնքի ավագանու 2010, 2011 և 2012 թվականներին ընդունված որոշումները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են՝ բառեր կամ թվեր այլ բառերով կամ թվերով փոփոխարինելու միջոցով, բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու

միջոցով, բաժիններ, գլուխներ, հողվածներ, մասեր, կետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով, բաժինների, գլուխների, հողվածների, մասերի, կետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով: Առանձին որոշումներում բացակայում են հղումները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին (ավագանու որոշումներ՝ 04.10.2010թ., թիվ 1, արձ. թիվ 8, 26.01.2011թ. թիվ 2, արձ. թիվ 1, 26.10.2011 թ. թիվ 2, արձ. թիվ 7, 29.06.2012 թ. թիվ 1, արձ. թիվ 3 և այլն):

Համայնքի ավագանու 31.07.2013 թ. թիվ 6 հերթական նիստում 2 որոշումներ են ընդունվել համայնքի բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, մինչդեռ այդ փոփոխությունները կարելի էր կատարել ընդամենը մեկ իրավական ակտով:

Համայնքի բյուջեները, բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, բյուջեներում կատարված փոփոխությունները հաստատելուն վերաբերվող ավագանու առանձին որոշումների հերթական համարներից հետո «Ն» (նորմատիվ) տառի նշումը բացակայում է (հիմք «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մաս):

- 4) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկման, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ներգրավված ֆինանսական այլ միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողություն չի իրականացրել և այդ հարցերի վերաբերյալ որոշումներ չի կայացրել:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքը օրենքով սահմանված կարգով վարկեր չի ստացել:

- 5) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում, ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի ավագանին թվով 13 որոշումներ է կայացրել կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների որոշման վերաբերյալ, համաձայն որոնց համայնքի թվով 55 կարիքավոր անձանց տրամադրվել է ընդհանու գումարով՝ 1775.0 հազ. դրամի միանվագ դրամական օգնություն (ավագանու որոշումներ՝ 04.10.2010թ., թիվ 2, արձ. թիվ 8, 22.10.2010թ. թիվ 2, արձ. թիվ 9, 15.12.2010թ., թիվ 2, արձ. թիվ 10, 17.12.2010թ. թիվ 3, արձ. թիվ 11, 24.11.2011թ. թիվ 3, արձ. թիվ 8, 27.07.2012 թ. թիվ 2, արձ. թիվ 5, 28.03.2013 թ. թիվ 1, արձ. թիվ 3, 26.06.2013 թ. թիվ 1, արձ. թիվ 4 և այլն):

Ընդունված ոչ բոլոր որոշումներում են համապատասխան հղումներ կատարվել համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները որոշելու համայնքի ավագանու իրավասությունը սահմանող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթին և համապատասխան գրառումներ չեն կատարվել դրամական օգնության տրամադրման անհրաժեշտության, պատճառի կամ շահառուի կարիքավորության մասին:

Համայնքի ավագանու 24.11.2011թ. թիվ 3 (արձ. թիվ 8) որոշմամբ համայնքի թվով 12 կարիքավոր ընտանիքների դրամական օգնություն տրամադրելու համար համայնքի բյուջեից հատկացվել է 369.6 հազ. դրամ, իսկ շահառուների դիմաց նշված գումարների հանրագումարը

կազմում է 366.6 հազ. դրամ, այսինքն՝ բյուջեից հատկացված և կարիքավոր անձանց տրամադրված գումարի տարբերությունը կազմում է 3.0 հազ. դրամ:

6) Համայնքի ավագանին թվով 5 որոշումներ է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու և օգտագործման տրամադրելու վերաբերյալ:

Հարցի վերաբերյալ ստուգման արդյունքների մանրամասները ներկայացված են սույն ենթաբաժնի 15-րդ կետում:

7) Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում, համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել և այդ հարցերի վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

8) Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի համաձայն համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկման դեպքեր չեն արձանագրվել:

9) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 17.12.2010թ. թիվ 2, արձ. թիվ 11, 08.12.2011թ. թիվ 3, արձ. թիվ 9 և 04.12.2012թ. թիվ 4, արձ. թիվ 9): Համայնքի ղեկավարի սահմանված աշխատավարձերի չափերը համապատասխանում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Ազգային ժողովի պատգամավորի աշխատավարձի նկատմամբ սահմանված տոկոսաչափին: Ավագանու 17.12.2010թ. թիվ 2 (արձ. թիվ 11), 08.12.2011թ. թիվ 3, (արձ. թիվ 9) որոշումներում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները:

10) Համայնքում բյուջետային հիմնարկներ, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված, ինչպես նաև դրանց ստեղծման համար համապատասխան միջոցներ և պայմաններ չունենալու պատճառով, ստուգված ժամանակաշրջանում համայնքում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, դրանց վերակազմակերպման կամ լուծարման մասին համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

11) Համայնքում բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված, ստուգված ժամանակաշրջանում բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին համաձայնություն տալու վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

12) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը հանված է (08.12.11 ՀՕ-342-Ն):

13) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 17.12.2010թ. թիվ 1, արձ. թիվ 11, 08.12.2011թ. թիվ 1, արձ. թիվ 9 և 04.12.2012թ. թիվ 3, արձ. թիվ 9):

Ընդունված որոշումներում համապատասխան հղումներ չեն կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի դրույթներին և ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները: Իսկ ավագանու 7.12.2010թ. թիվ 1 (արձ. թիվ 11) որոշման մեջ հղումներ չեն կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին, բացի այդ ընդունված որոշումը չունի եզրափակիչ դրույթներ, այսինքն որոշմամբ պարզ չէ, թե ավագանին հաստատել է համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր, թե՛ ոչ:

Ընդունված որոշումներով հաստատված հավելվածները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի դրույթներին, համաձայն որոնց՝ իրավական ակտերում դրույթները շարադրվում են հերթական համար ունեցող կետերի տեսքով: Կետերը կարող են բաժանվել միայն համարակալված ենթակետերի, իսկ ենթակետերը՝ միայն համարակալված պարբերությունների: Կետերը և ենթակետերը համարակալվում են արաբական թվանշաններով, իսկ պարբերությունները՝ հայերենի այբուբենի փոքրատառերով: Իրավական ակտերի կետերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, ենթակետերը՝ փակագծերով, իսկ պարբերությունները միջակետերով:

Ստուգված ժամանակաշրջանում տեղական հարկերի տեսակների և դրույքաչափերի սահմանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

14) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափեր սահմանելու վերաբերյալ ավագանին որոշումներ չի կայացրել:

15) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն համայնքի ավագանին թվով 5 որոշումներ է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու և օգտագործման տրամադրելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 04.03.2011թ. թիվ 1, արձ. թիվ 2, 24.11.2011թ. թիվ 2, արձ. թիվ 8, 27.07.2012թ. թիվ 3, արձ. թիվ 5, 02.09.2012թ. թիվ 1, արձ. թիվ 7, 01.07.2013թ. թիվ 1, արձ. թիվ 5):

Ավագանու 04.03.2011թ. թիվ 1 որոշմամբ (արձ. թիվ 2) համաձայնություն է տրվել համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համայնքի սեփականություն հանդիսացող կերախոհանոցի շենքը, իր զբաղեցրած 161.72 հա հողամասով, արտամրցությամբ կարգով վաճակալության իրավունքով հանայնքի բնակիչ Գագիկ Հարությունյանին օգտագործման տրամադրելու վերաբերյալ, վարձավճարի չափ է սահմանվել տարեկան 18.0 հազ. դրամ:

Որոշման մեջ չի նշվել գույքը տվյալ քաղաքացուն վաճակալության իրավունքով օգտագործման տրամադրելու նախապատվության (հիմքի) մասին, չի նշվել շենքի և նրա զբաղեցրած հողատարածքի օգտագործման տրամադրման ժամկետը և նպատակը, շինության

և նրա գբաղեցրած հողամասի գտնվելու վայրը (հասցեն), կադաստրային ծածկագիրը (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ):

Ավագանու 24.11.2011թ. թիվ 2 որոշմամբ (արձ. թիվ 8) համաձայնություն է տրվել համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերական, ընդերքօգտգործման և այլ արտադրական նշանակության հողերը օգտագործման տրամադրելու վերաբերյալ, 1 հա-ի համար վարձավճարի չափ է սահմանվել տարեկան 30.0 ռազ. դրամ: Որոշման մեջ չեն նշվել հողմասի չափը, օգտագործման տրամադրման եղանակը, հողամասի գտնվելու վայրը (հասցեն), հողամասի կադաստրային ծածկագիրը, օգտագործման տրամադրման նպատակն ու ժամկետը (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ):

Ավագանու 27.07.2012թ. թիվ 2 որոշմամբ (արձ. թիվ 5) համայնքի ղեկավարի առաջարկությամբ հասցեավորվել և համաձայնություն է տրվել համայնքի սեփականություն հանդիսացող արտադրական նշանակության հողերից 0.21 հա հողամասը ոչխարանոց կառուցելու նպատակով աճուրդով օտարելու և օտարման մեկնարկային գինը հաստատելու վերաբերյալ: Որոշման մեջ ճիշտ չեն նշվել հողի նպատակային և գործառնական նշանակությունները, չի նշվել հողամասի կադաստրային ծածկագիրը և օտարման ժամկետը (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ): Բացի այդ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն շենքերի և շինությունների համարակալումը սահմանելու իրավասությունը վերապահված է ոչ թե համայնքի ավագանուն, այլ՝ համայնքի ղեկավարին:

Ավագանու 27.07.2012թ. թիվ 2 որոշմամբ (արձ. թիվ 5) նշված հարցի վերաբերյալ ընդունվել է նոր որոշում, որի վերնագիրը ձևակերպվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության Մեծ Սարիարի համայնքի սեպտեմբեր ամսի սեփականությունը համարվող հողը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվության մասին»: Չի ապահովվել «Իրավական կտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջը և ուժը կորցրած չի ճանաչվել նույն հարցի վերաբերյալ ընդունված ավագանու նախորդ որոշումը: Որոշման մեջ կրկին ճիշտ չեն նշվել հողի նպատակային և գործառնական նշանակությունները, չեն նշվել հողամասի կադաստրային ծածկագիրը և օտարման ժամկետը (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ):

Ավագանու 27.07.2012թ. թիվ 2 (արձ. թիվ 5) որոշմամբ համաձայնություն է տրվել համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համայնքի սեփականությունը հանդիսացող թիթեղյա պահեստը և քանդված ակումբը ապամոնտաժելու և դրանք համայնքի կարիքների համար օգտագործելու վերաբերյալ: Որոշման մեջ չեն նշվել ապամոնտաժման արդյունքում ձեռք բերված շինարարական նյութերի տեսակները, քանակը և դրանք օգտագործելու համայնքի կարիքները:

Նշված հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները ձևակերպված են անփույթ և առկա են ջնջումներ:

- 16) Ստուգված ժամանակաշրջանում համայնքային նշանակության փողոցների, հրապարակների, գբոսայգիների, համայնքային ենթակառուցվածքային կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու

կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

- 17) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 17.12.2010թ. թիվ 2, արձ. թիվ 11, 08.12.2011թ. թիվ 4, արձ. թիվ 9 և 04.12.2012թ. թիվ 5, արձ. թիվ 9):

Նշված հարցի վերաբերյալ ավագանու 10.01.2011թ. թիվ 3 և 16.12.2012թ. թիվ 12 որոշումներում համապատասխան հղումներ չեն կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի դրույթներին և ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները:

Համայնքի ավագանու նույն որոշումներով հաստատվել են նաև համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և հաստիքացուցակը:

Ստուգված ժամանակաշրջանում գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների թվաքանակի և (կամ) հաստիքացուցակի փոփոխություններ և (կամ) լրացումներ չեն կատարվել և այդ հարցով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին դիմելու մասին որոշումներ չեն կայացվել:

- 18) Համայնքի ավագանին չի հաստատել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:

- 19) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի համաձայն համայնքի ավագանին հաստատել է համայնքի սեփականության 2010 և 2012 թվականների գույքագրման փաստաթղթերը (ավագանու որոշումներ՝ 26.12.2010թ. թիվ 20, արձ. թիվ 10, 24.12.2012թ. թիվ 23, արձ. թիվ 8):

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջը և համայնքի սեփականության 2010 թվականի գույքագրման փաստաթղթերը չի ներկայացրել ավագանու հաստատմանը:

Համայնքի ղեկավարը չի ապահովել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջը և սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո մեկշաբաթյա ժամկետում գույքագրման փաստաթղթերում չի կատարել համապատասխան փոփոխություն և այն չի ներկայացրել ավագանու առաջիկա նիստի հաստատմանը:

1.Ֆինանսների բնագավառ

- 1) Մեծ Սարիարի համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն կազմել և սահմանված ժամկետներում համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեների նախագծերը՝ (ավագանու որոշումներ՝ 15.12.2010թ. թիվ 4, արձ. թիվ 10, 08.12.2011թ., թիվ 5, արձ. թիվ 9 և 04.12.2012թ. թիվ 5, արձ. թիվ 9), դրանցում առաջարկվող փոփոխությունները (ավագանու որոշումներ՝ 04.10.2010թ., թիվ 1, արձ. թիվ 8, 15.12.2010թ., թիվ 1, արձ. թիվ 10, 26.01.2011թ. թիվ 2, թիվ արձ. թիվ 1, 26.10.2011 թ. թիվ 2,

արձ. թիվ 7, 29.06.2012 թ. թիվ 1, արձ. թիվ 3, 18.01.2013 թ. թիվ 1, արձ. թիվ 1, 31.07.2013 թ. թիվ թիվ 1,2, արձ. թիվ 6 և այլն), համայնքի 2010 և 2012 թվականների բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները՝ (ավագանու որոշումներ 26.01.2011թ. թիվ 1, արձ. թիվ 1 և 18.01.2013թ. թիվ 2, արձ. թիվ 1):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված համայնքի ղեկավարի գործունեության և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների կատարման վերաբերյալ ստուգման արդյունքները ներկայացված են սույն ակտի 2-րդ էջի 3-րդ կետում:

Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, ստուգված ժամանակաշրջանում համայնքի բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ 2010թ. 3-րդ, 2011թ. 3-րդ, 2012թ. 1-ին և 3-րդ, 2013 թ. 1-ին եռամսյակների համար հաղորդումներ չի ներկայացրել համայնքի ավագանուն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածների՝ համայնքի 2010-2013թթ. բյուջեների կատարողականների վերահսկողության գործառույթներ համայնքի ավագանու կողմից չի իրականացվել: Իսկ համայնքի 2010 և 2012 թվականների բյուջեների կատարողականների տարեկան հաշվետվություններն ավագանին քննարկել և հաստատել է առանց աուդիտորական եզրակացության:

2) Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը:

3) Համայնքի ղեկավարը ոչ լրիվությամբ է իրականացրել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2.1 մասի դրույթով սահմանված՝ տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարների գանձումների կազմակերպման և վերահսկման իր պարտադիր լիազորությունները:

2010թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 7359.4 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 6786.2 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 92.2 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 573.2 հազար դրամ:

2011թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 6350.5 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 5869.5 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 92.4 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 481.0 հազար դրամ:

2012թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 6124.8 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 5906.4 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 96.4 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 218.4 հազար դրամ:

2013 թվականի 7 ամիսների համայնքի բյուջեով նախատեսված 3465.3 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 3261.7 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 85.5 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 203.6 հազար դրամ:

4) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.2 մասի պահանջի, համայնքի ղեկավարի կողմից տեղական հարկեր, տեղական տուրքեր և վճարներ չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն կիրառվել:

Համայնքի ղեկավարը 2010-2013թթ. բյուջետային տարիներին համայնքի բյուջեներով տեղական տուրքը չեն նախատեսել, քանի որ համայնքում տեղական տուրք վճարող օբյեկտ չի գործում:

5) Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ղեկավարը չի ներկայացրել ավագանու հաստատմանը:

6) Համայնքի ղեկավարը ստուգված ժամանակաշրջանում ոչ լրիվությամբ է ապահովել համայնքի բյուջեի եկամուտների ամբողջական կատարումը:

Համայնքի վաղաջական բյուջե հավաքագրված գումարները հիմնականում ծախսվել են աշխատավարձերի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների, էլեկտրաէներգիայի, կոմունալ վճարումների, գործուղումների, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնությունների տրամադրման և այլ ծախսերի կատարման համար, իսկ ֆոնդային բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են ոչ լրիվությամբ:

2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավ

1. Մեծ Սարիարի համայնքի ղեկավարի կողմից համայնքի գլխավոր հատակագծի ու հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթերի կազմման գործառույթներ չեն իրականացվել:

2. Ստուգված ժամանակահատվածում համայնքի քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարման համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմման և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելու գործընթացներ համայնքում չեն իրականացվել:

3. Համայնք բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին իրազեկման, կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցման գործընթացներ չեն իրականացվել:

4. Համայնքի ղեկավարի կողմից շինարարության (քանդման) թույլտվություն չի տրամադրվել:

5. Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտեր չեն ձևակերպվել:

6. Համայնքում ինքնակամ շինարարության կանխման ու կասեցման դեպքեր չեն հայտնաբերվել և համայնքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

7. Համայնքի ղեկավարի կողմից շենքերի և շինությունների նպատակային օգտագործման, պահպանման և կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների կատարման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

8. Համայնքի ղեկավարի կողմից կատարվել է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների ամենամյա հաշվառում և համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերի կազմում: Համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանու

հաստատմանն է ներկայացվել համայնքի սեփականության միայն 2010 և 2012 թվականների գույքագրման փաստաթղթերը:

9. Համայնքի ղեկավարի կողմից արտաքին գովազդ տեղադրելու համար թույլտվություն չի տրամադրվել:

10. Համայնքային սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործման կազմակերպման և կառավարման վերաբերյալ գործառույթներ չեն իրականացվել:

11. Համայնքում բազմաբնակարան շենքերի բացակայությամբ պայմանավորված, դրանց կառավարմանն ու պահպանմանն ուղղված գործառույթներ չեն իրականացվել:

3. Հողօգտագործման բնագավառ

1. Մեծ Սարիարի գյուղական համայնքը ՀՀ կառավարության սահմանած կարգով հողերի գոտիավորման և օգտագործման սխեմա չի կազմել՝ համապատասխան ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով:

2. Մեծ Սարիարի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են ընդամենը 1277.06հա, որից վարելահող՝ 91.71հա, խոտհարք՝ 36.04հա, արոտ՝ 1043.4հա և այլ հողեր՝ 105.91հա: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են ընդամենը 428.24հա, որից վարելահող՝ 0.3հա, խոտհարք՝ 34.02հա, արոտ՝ 381.33հա և այլ հողեր՝ 12.59հա:

Գյուղապետարանում առկա է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերի համար կնքված և իրավունքների պետական գրանցման ենթարկված 22 վարձակալության պայմանագրեր՝ ընդամենը 40.7հա հողերի համար, 334.94 հազ. դրամ տարեկան վարձավճարով: Պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար առկա է կնքված և իրավունքների պետական գրանցման ենթարկված 2 պայմանագրեր, որից մեկը՝ 24հա խոտհարքի համար՝ 74.4հազ. դրամ տարեկան վարձավճարքով, իսկ երկրորդը 6հա արոտի համար՝ 51.6 հազ. դրամ տարեկան վարձավճարով:

Համաձայն հողամասի վարձակալության 2003 թվականի նոյեմբերի 11-ի պայմանագրի, Մեծ Սարիար համայնքում քարածխի արդյունահանման նպատակով վարձակալության է տրամադրվել պետական սեփականություն հանդիսացող 4հա խոտհարք և 6 հա արոտ:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 51.01հա վարելահողերը, 36.04հա խոտհարքները և 1043.4հա արոտները, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող 0.3հա վարելահողերը, 10.02հա խոտհարքը և 375.33հա արոտը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման տրամադրված չեն:

Ընդերքօգտագործման հողերը կազմում են՝ 4.64հա:

01.08.2010–31.12.2010թթ ժամանակահատվածում համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար բյուջեով նախատեսված

291.0հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 302.6հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

2011թ. բյուջեով նախատեսված 640.5հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 334.1հազ. դրամ վարձավճար և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, իսկ «Կարին Գեո» ՓԲԸ-ի կողմից գանձապետական բաժանմունք է մուտքագրվել 126.0հազ. դրամ հողի վարձավճար:

2012թ. բյուջեով նախատեսված 465.4 հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 465.4հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

01.01.2013-01.08.2013թթ ժամանակահատվածում բյուջեով նախատեսված 271.1 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 90.0 հազ. դրամ վարձավճար:

2013 թվականի մարտի 6-ին գյուղապետարանում անցկացված աճուրդ-վաճառքի արդյունքում օրենքով սահմանված կարգով օտարվել է համայնքային սեփականություն հանդիսացող 0.21 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտի հողամաս՝ 334.0 հազ. դրամ գումարով:

Համայնքում վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարների ապառքը առ 01.08.2013թ. դրությամբ կազմում է 374.8 հազ. դրամ:

3. Համայնքի գյուղացիական տնտեսություններում հաշվառված 2740 գլուխ խոշոր եղջերավոր անասունների սովորական պայմաններում 1043.4հա արոտները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման տրամադրված չեն: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվել արոտների օգտագործումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ:
4. Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ապօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:
5. Օրենքով սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռի կազմման գործընթացը:
6. Պատշաճ վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 10 գեոդեզիական կետերի և սահմանանիշերի պահպանության նկատմամբ:

4. Տրանսպորտի բնագավառ

- 1) Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման գործառույթներ համայնքի ղեկավարի կողմից չեն իրականացվել:
- 2) Համայնքում հասարակական տրանսպորտի, ինչպես նաև համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների ու կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված համայնքի ղեկավարի կողմից այդ ոլորտի գործունեության կազմակերպման և կառավարման ուղղությամբ գործառույթներ չեն իրականացվել:

- 3) Իրավասու մարմինների կողմից համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման, հանման հաստատման և թույլատրման առաջարկություններ չեն ստացվել և այդ ոլորտում համայնքի ղեկավարի կողմից գործառույթներ չեն իրականացվել:
- 4) Համայնքի ղեկավարի կողմից ՀՀ կառավարության սահմանած կարգով և ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհների վերաբերյալ լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմա չի կազմվել և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

7. Այլ բնագավառներ

- 1) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից հրավիրվել և անցկացվել են համայնքի ավագանու 28 նիստեր, որոնցում քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող 60 հարցեր և ընդունվել նորմատիվ ու անհատական բնույթի որոշումներ: Այդ թվում՝ 2010 թվականի 5 ամսում անցկացվել է 4 նիստ, ընդունվել է 11 որոշում, 2011 թվականին՝ 9 նիստ, 19 որոշում, 2012 թվականին՝ 9 նիստ, 19 որոշում, իսկ 2013 թվականի 7 ամսում՝ 6 նիստ, 11 որոշում:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվել են համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների 1 գրանցամատյան, որը սահմանված կարգով համարակալված, թելակարված և կնքված է համայնքի ղեկավարի կողմից:

Համայնքի ավագանու ոչ կանոնակարգված գործունեության արդյունքում ավագանու նիստերն անցկացվել են անկանոն և ըստ անհրաժեշտության: Ավագանու նիստերի ոչ բոլոր արձանագրություններում են համապատասխան նշումներ կատարվել ավագանու «հերթական» կամ «արտահերթ» նիստ գումարելու մասին: Իսկ ավագանու առանձին որոշումներ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով ստորագրված չեն համայնքի ավագանու անդամների, համայնքի ղեկավարի կողմից և կնքված չեն (ավագանու որոշումներ՝ 15.12.2010թ. թիվ 1, արձ. թիվ 10, 17.12.2010թ. թիվ 1, թիվ 2, արձ. թիվ 11, 08.12.2011թ. թիվ թիվ 1, 2, 3, 4, արձ. թիվ 9, 04.12.2012թ. թիվ թիվ 1, 2, 3, 4, 5, արձ. թիվ 9, 01.07.2013թ. թիվ 1 և այլն):

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը և 27.02.2012թ.-29.06.2012թ. ընկած ժամանակահատվածում չի ապահովել ոչ պակաս քան երկու ամիսը մեկ անգամ համայնքի ավագանու նիստերի անցկացումը: Իսկ 2012 թվականի հունիսի 29-ին անհասկանալի պատճառներով համայնքի ղեկավարի կողմից հրավիրվել և անցկացվել է ավագանու երկու նիստ:

Չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը և ավագանու նիստերի օրակարգերը չեն հաստատվել ավագանու որոշմամբ: Բացի այդ, համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների գրանցամատյանում ավագանու կողմից ընդունված իրավական ակտերի հերթական համարակալում չի կատարվել:

Առանձին դեպքերում ընդունված իրավական ակտերի բնույթի մասին՝ «Ն» (նորմատիվ), «Ա» (անհատական) տառերի նշումները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթներին:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի նորընտիր ավագանին ընդունել է ավագանու կանոնակարգը (ավագանու որոշում՝ 04.12.2012թ թիվ 1, արձ. թիվ 9):

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի սահմանջը և համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստը գումարել է օրենքով սահմանված ժամկետից ուշ: Բացի այդ, չի ապահովվել նաև ավագանու կանոնակարգի 3-րդ կետով սահմանված համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստի անցկացման ընթացակարգը, համաձայն որի ավագանու նորընտիր անդամները հանդիսավոր պայմաններում անհատական կարգով տալիս են երդում և ստորագրում են երդման տեքստը:

Համայնքի ղեկավարը թերութուններով է կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով սահմանված համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունները՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան որոշումների ընդունման, արձանագրությունների կազմման և կարգադրությունների արձակման ուղղությամբ:

Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջը և համայնքի ավագանու կողմից 2010, 2011, 2012 թվականներին ընդունված առանձին որոշումներ ՀՀ Շիրակի մարզպետարան չի ներկայացրել կամ ներկայացրել է սահմանված 7-օրյա ժամկետից ուշացումով:

Մասնավորապես, 2010 թվականի 5 ամիսներին համայնքի ավագանու կողմից ընդունված 11 որոշումներից ՀՀ Շիրակի մարզպետարան է առաքվել 9-ը, 2011 թվականին ընդունված 19 որոշումներից՝ 11-ը, 2012 թվականին ընդունված 19 որոշումներից՝ 7-ը, իսկ 2013 թվականի 7 ամիսներին ընդունված 11 որոշումներից 9-ը:

Համայնքի ղեկավարի կողմից ոչ միշտ է ապահովվել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգը և համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ բնույթի ոչ բոլոր իրավական ակտերն են պետական իրավական փորձաքննության համար ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն (ավագանու կանոնակարգի ընդունում, համայնքի զարգացման քառամյա ծրագրի հաստատում, համայնքի բյուջեի և նրանում կատարված փոփոխությունների հաստատում, բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների հաստատում, օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանում և այլն):

Համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանու նիստերի ոչ բոլոր օրակարգերի նախագծերն են ձևավորվել նիստից առնվազն տասը օր առաջ: Նիստերի օրակարգերի նախագծերը, դրանցում ընդգրկված հարցերի որոշումների նախագծերը և համապատասխան փաստաթղթերը ոչ միշտ են տրամադրվել համայնքի ավագանու անդամներին նիստն սկսվելուց առնվազն յոթ օր առաջ, իսկ արտահերթ նիստեր հրավիրելու դեպքում նիստից մեկ օր առաջ (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 15-րդ հոդվածներ):

Աշխատակազմում սահմանված կարգով հաշվառում չի տարվել ավագանու նիստերին ավագանու անդամների մասնակցության վերաբերյալ: Ավագանու անդամ Է. Սահակյանը 2010 թվականին անցկացված ավագանու թվով 11 նիստերից բացակայել է 8-ից, իսկ 2011 թվականին անցկացված թվով 9 նիստերից բացակայել է 5-ից: Սակայն նշված փաստը ավագանու կողմից չի քննարկվել և նրա ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում չի կազմվել (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ, 2-րդ մաս):

Համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի որոշումներին և կարգադրություններին բնութագրական են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառման տարբեր խախտումներ: Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի առանձին որոշումներ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի համաձայն չեն պարունակում հղումներ, թե դրանք ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի մասի համաձայն կամ ի կատարումն են ընդունվել, իսկ առանձին որոշումներում կատարված հղումները սխալ են, թերի կամ ոչ հստակ (ավագանու որոշումներ՝ 04.10.2010թ. թիվ 1, արձ. թիվ 8, 17.12.2010թ. թիվ 1, արձ. թիվ 11, 26.01.2011թ. թիվ 2, արձ. թիվ 1, 08.12.2011թ. թիվ 5, արձ. թիվ 9, 29.06.2012թ. թիվ 1, արձ. թիվ 3, 01.07.2013թ. թիվ 1, արձ. թիվ 5 և այլն, համայնքի ղեկավարի որոշումներ՝ 12.01.2011թ. թիվ 1, 10.04.2011թ. թիվ 4, 16.06.2011թ. թիվ 7, 10.01.2012թ. թիվ 1, 18.01.2013թ. թիվ 2 և այլն):

- 2) Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1՝ կետի պահանջը և իր կողմից ընդունված ոչ բոլոր անհատական ակտերն է սահմանված ժամկետում ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցրել համայնքի ավագանու նստավայրում:
- 3) Համայնքի ղեկավարը կազմել է համայնքի 2011-2014 թթ զարգացման ծրագիրը, սակայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 53-րդ հոդվածով սահմանված կարգով այն համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացրել:
- 4) Գյուղապետարանի աշխատակազմի նոր կանոնադրությունը հաստատվել է համայնքի ավագանու 2013 թվականի մայիսի 8-ի թիվ 1 որոշմամբ (արձ. թիվ 3):
- 5) Առանձնացված ստորաբաժանումների և համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների բացակայությամբ պայմանավորված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված կարգով գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքները հաստատելու վերաբերյալ որոշման նախագծեր ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 6) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2011, 2012 և 2013 թվականների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է համայնքի ավագանու հաստատմանը: Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների սահմանված կարգով հաստատված և գործողության մեջ դրված հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին:

- 7) Համայնքի ղեկավարի կողմից համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 8) Համայնքում համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված համայնքի ղեկավարի կողմից դրանց խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 9) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված լիազորությունների շրջանակում համայնքի ղեկավարի 2009 թվականի հուլիսի 30-ի թիվ 6 կարգադրությամբ, հիմք ընդունելով գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի թափուր պաշտոնն զբաղեցնելու 29.07.2009 թվականի մրցույթի արդյունքները, Արմանուշ Յայլոյանը նշանակվել է գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար, որը ներկայումս պաշտոնավարում է: Անահասկանալի է այն փաստը, թե համայնքի ղեկավարի 2012 թվականի (ընդունման օրը նշված չէ) թիվ 13 կարգադրությամբ նույն անձը ինչու է կրկին նշանակվել նույն պաշտոնին: Անհրաժեշտ է <<հրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 75-րդ հոդվածով սահմանված կարգով այդ հրավական ակտը ճանաչել չեղյալ: Բացի այդ, չի ապահովվել ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6 արձանագրային որոշմամբ հավանություն տրված տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող փաստաթղթերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույցի 4-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու մասին համայնքի ղեկավարը ընդունում է որոշում:
- 10) Համայնքում բյուջետային հիմնարկների բացակայությամբ պայմանավորված, համայնքի ղեկավարի կողմից այդ հիմնարկների ղեկավարների պաշտոններում նշանակում կատարելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություն չի ներկայացվել:
- 11) Համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 12) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրեր չեն կնքվել և միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծեր ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 13) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանու 2012 թվականի հուլիսի 27-ին կայացած նիստում առաջարկություն է ներկայացվել համայնքի սեփականություն հանդիսացող արտադրական նշանակության հողերից 0.21 հա հողամասը ոչխարանոց կառուցելու նպատակով աճուրդով օտարելու և օտարման մեկնարկային գինը հաստատելու վերաբերյալ:
- 14) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություն չի ներկայացվել:
- 15) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից համայնքի փողոցների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ

հիմնարկների անվանման կամ վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություններ չեն ներկայացվել:

16) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից անշարժ գույքի հասցեավորման վերաբերյալ որոշումներ չեն ընդունվել: Հասցեավորման վերաբերյալ մեկ որոշում է կայացվել համայնքի ավագանու կողմից, որը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն վերապահված է համայնքի ղեկավարին:

17) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 27 որոշում և արձակվել 9 կարգադրություն, որոնք արձանագրված են սահմանված կարգով համարակալված, թելակարված և համայնքի ղեկավարի կողմից կնքված համապատասխան գրանցամատյաններում:

Համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների մեծ մասը <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով սահմանված կարգով չունեն վերնագրեր (12.01.2011թ. թիվ 1, 15.02.2011թ. թիվ 2, 25.03.2011թ. թիվ 3, 16.06.2011թ. թիվ 7, 15.12.2011թ. թիվ 9 և այլն, համայնքի ղեկավարի կարգադրություններ՝ 13.09.2010թ. թիվ 8, 01.10.2010թ. թիվ 9, 01.10.2011թ. թիվ 10, 05.11.2011թ. թիվ 11, 16.11.2012թ. թիվ 14 և այլն/:

Համայնքի ղեկավարի կարգադրությունների հերթական համարակալումը չի համապատասխանում <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, համաձայն որոնց իրավական ակտի հերթական համարը սահմանում է իրավական ակտն ընդունող մարմինը՝ միայն արաբական թվանշաններով, իսկ համարների հերթականությունը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից: Իսկ համայնքի ղեկավարի 2013 թվականի թիվ 13 և թիվ 15 կարգադրություններում նշված չէ ընդունման օրը:

Համայնքի ղեկավարի 12.01.2011թ. թիվ 1 որոշմամբ համայնքում ստեղծվել է խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից հանձնաժողով: Դա այն դեպքում, երբ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ կետ համաձայն համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի ստեղծումը վերապահված է համայնքի ավագանուն:

Համայնքի ղեկավարը 16.06.2011 թ. թիվ 7 որոշմամբ վերազանցել է իր իրավասությունը և առանց համայնքի ավագանու համապատասխան որոշման, համայնքի սեփականություն հանդիսացող գույքը (խմելու ջրագրերից հանված խողովակներ) տրամադրել է օգտագործման: Որոշման մեջ չեն նշվել խողովակների քանակն ու համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման պայմանները (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ):

Համայնքի ղեկավարի 20.11.2011թ. թիվ 9 որոշմամբ համայնքի ներհամայնքային փողոցների ձյան մաքրման աշխատանքների կատարման համար համայնքի բյուջեից նախատեսվել է գումարի հատկացում, սակայն գումարի չափը չի նշվել:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի աճուրդ վաճառք անցկացնելու մասին համայնքի ղեկավարի 07.03.2012թ. թիվ 5 և 18.01.2013թ. թիվ 2 որոշումներում հղում է կատարվել համայնքի ավագանու 15.07.2012թ. թիվ 6 որոշմանը, որը ավագանու որոշումների արձանագրությունների գրանցամատյանում արձանագրված չէ:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեների մասին համայնքի ավագանու որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո երկշաբաթյա ժամկետում չի սահմանել համայնքի բյուջեների կատարման եռամսյակային համամասնությունները:

18) Որպես պետության պատվիրակած լիազորություն համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել և ղեկավարվել է համայնքում անասնաբուժական ծառայությունը: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխման և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Ստուգված ժամանակաշրջանում համայնքում անասունների հիվանդությունների բռնկման դեպքեր չեն արձանագրվել:

19) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների վարման աշխատանքներ չեն իրականացվել:

20) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

Սահմանված կարգով համայնքում ստեղծվել և գործում են քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարիանման հանձնաժողով և քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

Համայնքի ղեկավարի 10.04.2011թ. թիվ 4 որոշմամբ համայնքում ստեղծվել և գործում է գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման հանձնաժողով:

Համայնքի ղեկավարի 16.07.2011թ. թիվ 8 որոշմամբ համայնքում անցկացվել են քաղաքացիական պաշտպանության ուսումնավարություններ:

Համայնքի ղեկավարի 15.10.2012թ. թիվ 8 որոշմամբ համայնքում ստեղծվել և գործում է արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով:

21) Գյուղապետարանում սահմանված կարգով վարվում է համայնքային գիրք (ծխամատյան) և կազմակերպվում է համայնքի բնակիչների հաշվառումը:

22) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում ներկայացնելու դեպքեր չեն արձանագրվել:

23) Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից կատարվում են քաղաքացիների ընդունելություններ, օրենքով սահմանված կարգով քննության են առնվում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ:

24) Համայնքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով է ստեղծվել համայնքի ղեկավարի 12.01.2011թ. թիվ 1 որոշմամբ, որը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 14-ի թիվ 164-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ կետ պահանջներին, համաձայն որի

խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը (5-9-ը անձ) հաստատելու մասին որոշումը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ հանձնաժողովի անհատական կազմից սահմանվում են նաև հանձնաժողովի նախագահ և հանձնաժողովի քարտուղար:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից խնամակալություն կամ հոգաբարձություն չի սահմանվել:

25) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի ղեկավարի կողմից տրվել են երեխայի ծննդի պետական գրանցման վերաբերյալ գրավոր հայտարարություններ:

26) Գյուղապետարանում օրենքով սահմանված կարգով վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացվել են տարածքային զինվորական կոմիսարիատ: Ստուգված ժամանակաշրջանում համայնքի զինապարտ քաղաքացիների կողմից իրենց պարտականությունները խախտելու դեպքեր չեն արձանագրվել:

ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. Գյուղապետարանի աշխատակազմի նոր կանոնադրությունը հաստատվել է համայնքի ավագանու 2013 թվականի մայիսի 8-ի թիվ 1 որոշմամբ (արձ. թիվ 3):

2. ՀՀ կառավարության սահմանված կարգով աշխատակազմում չեն վարվում իրավական ակտերի հաշվառման մատյաններ:

3. Իրավական ակտերի հաշվառման մատյանների բացակայությամբ պայմանավորված ուսումնասիրության ենթարկված համայնքի ավագանու թվով 60 որոշումների, համայնքի ղեկավարի թվով 27 որոշումների, արձակված թվով 9 կարգադրությունների և աշխատակազմի քարտուղարի թվով 9 հրամանների համադրում հնարավոր չէ իրականացնել:

4. Աշխատակազմում առանձնացված ստորաբաժանում (բաժին) չլինելու պատճառով, ստուգված ժամանակաշրջանում գյուղապետարանի կառուցվածքը հաստատելու վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

5. ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 55-Ա հրամանով հաստատված Մեծ Սարիարի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 2-ն են՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր՝ 1.2.3) և առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1.1): Նշված 2 համայնքային ծառայության պաշտոններն օրենքով սահմանված կարգով զբաղեցված են:

Համայնքի ավագանու համապատասխան որոշումներով 2011, 2012 և 2013 թվականների համար հաստատված գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համապատասխանում են ՀՀ տարածքային կառավարման